Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. հուլիսի 2-ին, ժամը 10:30-ին Հայաստանի շախմատի ակադեմիան «Շախմատի ակադեմիայի ակումբի» հետ միասին կազմակերպում են շախմատի կայծակնային մրցաշար՝ նվիրված միջազգային գրոսմայստեր, Հայաստանի վաստակավոր մարզիչ **Արսեն Եղիազարյանի** հիշատակին, որը տեղի կունենա Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34):

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ շախմատային կարգ ունեցողները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ՝

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) անձնական հանդիպման արդյունքի (գործում է միայն այն դեպքում, երբ հավասար միավորներ վաստակած բոլոր մասնակիցները խաղացել են միմյանց դեմ)

գ) սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,

դ) հաղթանակների առավելագույն քանակի:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը՝ մուտքավճարների 60%-ը:

Մրցանակներ	I	II	III	IV	V
Հիմնական					

Հատուկ մրցանակներ
Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի
Լավագույն արդյունք ցույց տված կարգային մասնակից
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան մասնակից

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝
ՆՎԻՐՎԱԾ ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2100 և բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	2 500 ՀՀ դրամ
I և II, III կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 000 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, որ մրցաշարի մասնակիցների գրանցումն այսուհետ կատարվում է օնլայն տարբերակով մինչև **հուլիսի 1-ը, 18:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում **https://www.chessacademy.am/** անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, 0050, ՀՀ
Էլ. հասցե՝ chessacademyarm@gmail.com

Հեռ.՝ +374 10 44 84 79
Բջջ.՝ +374 77 44 84 73